# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

## ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի 2011թ. հունիսի 3-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 25-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ Գ. Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ. Դավթյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգի հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

1. Գիտական կոչումների շնորհում.

1.1. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի միջնորդությունը քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու Արման Թաթոյանին՝ դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի նախագահ դոցենտ Ս.Դիլբանդյանը ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, հայտնեց, որ Ա. Թաթոյանի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին ՀՀ կառավարության կողմից սահմանված պահանջներին, ինչպես նաև ներկայացրեց հավակնորդի թեկնածության վերաբերյալ համապատասխան ամբիոնի միաձայն երաշխավորությունը և ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի դրական եզրակացությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ.Բարսեղյանը, Ս.Մեղրյանը, Ա.Գաբուզյանը, Գ.Ղազինյանը:

Խորհուրդը որոշեց անցկացնել բաց քվեարկություն, որի արդյունքում միաձայն բավարարվեց մրցութային հանձնաժողովի միջնորդությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել քվեարկության արդյունքները և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու Արման Թաթոյանին շնորհել դոցենտի գիտական կոչում:

1.2. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի միջնորդությունը պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու Սերգեյ Քոչարյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի նախագահ դոցենտ Ս.Դիլբանդյանը ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, հայտնեց, որ Ս. Քոչարյանի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին ՀՀ կառավարության կողմից սահմանված պահանջներին, ինչպես նաև ներկայացրեց հավակնորդի թեկնածության վերաբերյալ համապատասխան ամբիոնի միաձայն երաշխավորությունը և ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի դրական եզրակացությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա.Վաղարշյանը, Տ. Դավթյանը, Ա.Գաբուզյանը, Գ.Ղազինյանը:

Խորհուրդը որոշեց անցկացնել բաց քվեարկություն, որի արդյունքում միաձայն բավարարվեց մրցութային հանձնաժողովի միջնորդությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել քվեարկության արդյունքները և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու Սերգեյ Քոչարյանին շնորհել դոցենտի գիտական կոչում:

2. ԼՍԵՑԻՆ. 2010-2011 ուսումնական տարվա պետական քննությունների, մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքների ամփոփման մասին (դեկանի տեղակալ, ի. գ. դ. Հ Խաչիկյան):

Հ. Խաչիկյանը ներկայացրեց, որ 2010-2011 ուսումնական տարում պաշտպանվել են 49 ավարտական աշխատանքներ, որից 37-ը գնահատվել է գերազանց, 11-ը՝ լավ, 1-ը բավարար: Պաշտպանվել են 69 մագիստրոսական թեզեր. որոնցից 56-ը գնահատվել է գերազանց, 13-ը՝ լավ: Պետական քննությաններ հանձնել են 183 ուսանողներ, որոնցից 39 ուսանող ստացել է գերազանց և լավ գնահատականներ, 44-ը՝ միայն գերազանց, 39-ը՝ միայն լավ, 35-ը՝ բավարար, 26-ը՝ տարբեր գնահատականներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Մեղրյանը, Տ. Դավթյանը, Ն. Այվազյանը, Ա. Իսկոյանը, Ա. Վաղարշյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. 2010-2011 ուսումնական տարվա պետական քննությունների, մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքների ամփոփման մասին դեկանի տեղակալի հաղորդումն ընդունել ի գիտություն :

3. ԼՍԵՑԻՆ. 2010-2011 ուսումնական տարվա պետական պետական քննական հանձնաժողովների նախագահների հաշվետվությունների մասին (զեկ.՝ պետական պետական քննական հանձնաժողովների նախագահներ):

Հանձնաժողովների նախագահները հաշվետվություն ներկայացրեցին 2010-2011 ուսումնական տարվա համապատասխան մասնագիտացումների գծով բակալավրիատի և հեռակա ուսուցման բաժնի պետական քննությունների, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների վերաբերյալ (հաշվետվությունները կցվում են), ինչպես նաև խորհրդի անդամների հետ քննարկեցին քննական գործընթացի հետ կապված իրենց տպավորություններն ու առաջարկությունները:

Ըստ այդմ, պետական քննական հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվել են դեկանատի կողմից նախատեսված ժամանակացույցին համապատասխան՝ առանց որևէ շեղման: Առավել զոհացուցիչ են եղել Քաղաքացիական իրավունք, քաղաքացիական դատավարություն, ինչպես նաև քրեական իրավունք և քրեական դատավարություն մասնագիտացման ուսանողների քննական արդյունքները, նվազ զոհացուցիչ՝ Սահմանադրական իրավունք, Պետության և իրավունքի տեսություն և Միջազգային իրավունք մասնագիտացման ուսանողների քննական արդյունքները:

Դրական համարվեց այն, որ նախորդ տարվա համեմատ այս տարի էականորեն բարձրացել է աշխատանքների վերաբերյալ ընդդիմախոսների գրախոսականների որակը, թե ծավալների, թե բովանդակության և սուր դիտողությունների առումով՝ իրապես արտացոլելով աշխատանքի առավելություններն ու թերությունները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Այվազյանը, Ա. Գաբուզյանը, Վ. Քոչարյանը, Ա. Վաղարշյանը, Ս. Մեղրյանը, Ռ. Եղյանը, Ս. Դիլբանդյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ 2010-2011 ուսումնական տարվա պետական քննական հանձնաժողովների նախագահների հաշվետվություններն ընդունել ի գիտություն (հաշվետվությունները կցվում են),

բ/ Հաշվի առնելով պետական քննական հանձնաժողովների նախագահների դիտողություններն ու առաջարկությունները՝ 2010-2011 ուսումնական տարվա պետական քննություններում տեղ գտած թերությունների վերաբերյալ, կարևորելով դրանք հետագայում բացառելու, ինչպես նաև իրավագիտության ֆակուլտետում կրթության որակը բարելավելու անհրաժեշտությունը, հանձնարարել՝ ֆակուլտետի ամբիոններին՝

1. Հետևողական լինել մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պատրաստման ժամանակ օգտագործվող գրականության ծավալների, թարմության և որակի նկատմամբ, դրանցում ներառել ոչ միայն և բացառապես ռուսալեզու, այլ նաև այլ օտարալեզու աղբյուրներ:
2. Վերանայել մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների առաջարկվող թեմաները՝ առավելագույնս ապահովելով դրանց արդիականությունը:
3. Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմայի առանձնահատկությունից ելնելով՝ ապահովել դրանցում նաև պրակտիկ նյութերի օգտագործումը: Միաժամանակ, նպաստել պրակտիկ նյութերին տեղում ծանոթանալու ուսանողների համար հնարավորության ստեղծմանը:
4. Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմայի առանձնահատկությունից ելնելով՝ ապահովել ուսանողների կողմից ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերի, Եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական և ՀՀ վճռաբեկ դատարանների որոշումների ուսումնասիրությունն ու վերլուծությունը:
5. Մշակել մեթոդական ցուցումներ և դրանց համապատասխան ողջ տարվա ընթացքում հետևողական աշխատանք տանել մագիստրոսական թեզեր և ավարտական աշխատանքներ պատրաստող ուսանողների հետ՝ ապահովելով աշխատանքների որակը և դրանց պատշաճ ներկայացումն ու հրապարակային պաշտպանությունը:

գ/ Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը դնել ֆակուլտետի դեկանատի և խորհրդի քարտուղարի վրա:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Մարգարյանը, Ա. Իսկոյանը, Գ. Պետրոսյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, իսկ հաշվետու ժամանակահատվածում ամբիոնում կատարված աշխատանքը գնահատել դրական:

**4. ԼՍԵՑԻՆ. Սահմանադրական իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Ն. Այվազյան):**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Վաղարշյանը, Ռ. Եդյանը, Ա. Գաբուզյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Սահմանադրական իրավունքի ամբիոնի կատարած աշխատանքների մասին հաշվետվությունն ընդունել ի գիտություն, իսկ հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի կատարած աշխատանքը գնահատել դրական:

**5. ԼՍԵՑԻՆ. 2010-11 ուսումնական տարվա առաջին կիսամյակում ուսանողության շրջանում անցկացված անանուն սոցհարցումների արդյունքների ամփոփման մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչներ):**

Զեկուցողները ներկայացրեցին, որ ուսանողների շրջանում անցկացված հերթական անանուն սոցիոլոգիական հարցումների արդյունքները քննարկվել են ամբիոնների նիստերում, հատուկ ուշադրություն է դարձվել հարցման թերթիկի այն հարցերի վրա, որոնցից ամբիոնի դասախոսները համեմատաբար ցածր գնահատականներ են ստացել: Նշվեց նաև,

որ անընդհատ կատարելագործման կարիք են զգում նաև հարցաթերթիկում ընդգրկված հարցերը՝ դրանք ուսանողի համար ավելի պարզ և մատչելի դարձնելու նպատակով: Ըստ զեկուցողների՝ անհրաժեշտ է նաև վերանայել հարցման մասնակիցների շրջանակը՝ դրա համար ընտրելով որոշակի օբյեկտիվ չափանիշներ: Բացի այդ, գնահատման գործընթացում սուբյեկտիվ գործոնի դերը նվազեցնելու նպատակով առաջարկվեց հարցումներն անցկացնել համապատասխան դասընթացի ավարտից անմիջապես հետո՝ մինչև քննաշրջանի սկսվելը, իսկ արդյունքները հրապարակել քննաշրջանի ավարտից հետո:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Այվազյանը, Տ. Բարսեղյանը, Ա. Վաղարշյանը, Ս. Դիլբանդյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ ուսանողների շրջանում անցկացված անանուն սոցիոլոգիական հարցումների արդյունքներն ընդունել ի գիտություն,

բ/ հանձնարարել ամբիոններին մշտապես ուշադրության կենտրոնում պահել հարցացանկի այն կետերը, որոնց վերաբերյալ ամբիոնի և առանձին դասախոսների միջին գնահատականը ցածր է:

**6. ԼՍԵՑԻՆ. 2010-2011 ուսումնական տարվա ամբիոնային և անհատական ծանրաբեռնվածությունների հաստատման մասին (զեկ.՝ արհմիության նախագահ՝ Ա. Պետրոսյան, ամբիոնի վարիչներ):**

Զեկուցողները նշեցին, որ իրավագիտության ֆակուլտետում 2011-12 ուսումնական տարվա ամբիոնային և անհատական ծանրաբեռնվածությունները նախնական վիճակով կազմված, պատրաստ են: Սակայն դրանք խորհրդի վերջնական հաստատմանը կարող են ներկայացվել այլ ֆակուլտետներում իրավագիտության ֆակուլտետի դասախոսների ծանրաբեռնվածությունները ներկայացնելուց հետո միայն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Այվազյանը, Տ. Բարսեղյանը, Ա. Վաղարշյանը, Ս. Դիլբանդյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. 2010-2011 ուսումնական տարվա ամբիոնային և անհատական ծանրաբեռնվածությունների հաստատման հարցին անդրադառնալ խորհրդի առաջիկա նիստերին:

**7. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի 2010-2011 ուս. տարվա շրջանավարտներին ասպիրանտուրայի ընդունելության քննություններին մասնակցելու երաշխավորություն տալու մասին:**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Խորհրդի գիտական քարտուղարը հայտնեց, որ ԵՊՀ 2011-2012 ուս. տարվա ասպիրանտուրա ընդունվելու համար երաշխավորություն տալու խնդրանքով խորհրդին են դիմել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի 2010-2011 ուս. տարվա հետևյալ շրջանավարտները.

1. Լևոն Օհանյան,
2. Արմեն Գրիգորյան,
3. Վահագն Դալլաքյան,
4. Սայադ Բաղալյան,
5. Արսեն Թավադյան,

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ. Բարսեղյանը, Ն. Այվազյանը, Ա. Գաբուզյանը, Ա. Իսկոյանը:

ՈՐՈՇԵՑԻՑԻՆ. Հաշվի առնելով վերոհիշյալ մագիստրոսների բարձր առաջադիմությունը և ասպիրանտուրայում ուսումը շարունակելու ցանկությունը՝ երաշխավորել նրանց մասնակցելու ասպիրանտուրայի ընդունելության քննություններին:

8.1. ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի դոցենտ Արթուր Վաղարշյանի «Հայաստանի առաջին Հանրապետության գործադիր իշխանության համակարգը /1918-1920թթ./» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ռ. Մելիքյանը, Կ. Գևորգյանը, Ա. Իսկոյանը, Տ. Դավթյանը. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի միջնորդությունը և ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված աշխատությունը գրված է պատշաճ մակարդակով, ունի գործնական կարևոր նշանակություն, երաշխավորել տպագրության:

8.2. ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի դոցենտ Արթուր Վաղարշյանի «Հայաստանի առաջին Հանրապետության օրենսդիր իշխանության համակարգը /1918-1920թթ./» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ռ. Մելիքյանը, Կ. Գևորգյանը, Ա. Իսկոյանը, Տ. Դավթյանը. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի միջնորդությունը և ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված աշխատությունը գրված է պատշաճ մակարդակով, ունի գործնական կարևոր նշանակություն, երաշխավորել տպագրության:

| | |
|---|---|
| *Խորհրդի նախագահ* | *Գ. Ղազինյան* |
| *Խորհրդի քարտուղար* | *Տ. Դավթյան* |